№ 17 Փետրվարի 2 Հինգշաբթի 1884 Փետրվարի 2 Հինգշաբթի № 17

ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ».

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

„ՄՇԱԿ“

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

ՆԵՐԿԱՅ **1884** ԹՒԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ԴԻՐՔՈՎ, ԵՒ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ,

ՊՐՕԳՐԱՄԱ

I. ՏԷՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ II. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ։ III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ *Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր։* IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ *Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր։* V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ VI. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ *Ֆելիետօն, վէպեր, ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ գիտութեան ամեն ճիւղերից, թղթակցութիւններ։* VIII. ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ։ Տարեկան 10 *ռուբլ*, վեց ամսվայ 6 *ռուբլ*, *իւրաքանչիւր* ամսվայ 1 *ռուբլ*։
ՀԱՏՈՎ *համարները* 5 *կոպէկ*։
ՀԱՍՑԷՆ։ *Тифлисъ, редакція «Мшакъ»*.

Խմբագիր—Հրատարակող ԴՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ «Առողջապահական թերթի» կողմից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Անմեղ զոհ նախապաշարմունքի։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐԻՆ ԵՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ, «ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԹԵՐԹԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Երբ դեռ մտադիր էի հրատարակել «Առողջապահական թերթը» ամենայն կողմից լսում էի համակրական խօսքեր, ամեն մի հայ բժիշկ խոստանում էր օգնել, ներկայացնելով առողջապահութեան վերաբերեալ ինքնուրոյն յօդուածներ կամ թարգմանութիւններ։ Կային և այնպիսի մարդիկ, որոնք ասում էին, թէ այդպէս մի «Թերթ» մեզանում չէ կարող գոյութիւն ունենալ և մեծ պարտքի տակ կընկնի։ Ես չը լսեցի այս վերջիններին և սկսեցի հրատարակել, յոյս դնելով առաջինների վրա։

Ահա անցաւ երկու տարի, որ հրատարակվում է «Առողջապահական թերթը» բայց, նայեցէք թէ մեր հայ բժիշկներից և հայ բժիշկ ուսանողներից քանի՞ յօդուած է ստացել խմբագրութիւնը և դրանց աշխատութիւնները քանի՞ երեսից են բաղկացած։

Մեր հայ բժիշկները գրել են երկու տարվայ ընթացքում 15 յօդուած, որոնցից կայացել է «Առողջապահական թերթի» $74^1/_2$ երես։

Հայ բժիշկ ուսանողները գրել են 2 յօդուած, որոնցից կայացել է 12 երես։

Ոչ-բժիշկները թարգմանել են 4 յօդուած, որոնցից կայացել է $56^1/_2$ երես։

Հայ բժիշկներից ստացվել և տպագրվել է երկու տարվայ ընթացքում.

	թիւ յօդ.	«Թերթի» տպ. երես
Բժշկ. Ա. Ի. Յովհաննիսեանից . .	8	$36^1/_2$
Բժշկ. Ա. Բարայեանից.	4	21
Բժ. Տ. Շահազիզեանից	1	8
Բժշկից	1	6
Բժ. Ա. Մ. Միրիմանեանից	1	3
Բժ. ուս. Փարիզի Վ. Աբծրանտից.	1	9
Բժ. ուսանող Մոսկվայի Ա. Կարապետեանից	1	3
ոչ բժիշկներից		
Տէսուչ Ս. Բէգնազարեանից. . . .	1	45
Պ. Խ.	2	$10^1/_2$
Մ. Աթանասեանից	1	1
	21	143

Տպագրվել է երկու տարուայ ընթացքում 40 տպագրական թերթ, անում է 640 երես «Թերթի» և բացի այդ՝ մէկ յաւելուած (բառարան բժշկական բոյսերի)։ 640 երեսն անում է մէկ հատ գիրք։ Այս 640 երեսից երկու տարուայ ընթացքում գրել են մեր ազգի բոլոր բժշկական ոյժերը և բժշկութիւնը ժողովրդական դարձնողները միայն 143 երես «Թերթի»։ Ես, ինչպէս խմբագիր, ստիպուած եմ եղել գրելու 479 երես (ինքնուրոյն կամ թարգմանութիւն), որ ինքն ըստ ինքեան կազմում է մէկ հատ գիրք։

Այս հաշուից երևում է, որ մեր հայ բժիշկները և հայ բժիշկ ուսանողները ցանկութիւն չունեն կամ ծոյլութիւն են անում օգնել մեր ժողովրդին «Առողջապահական Թերթի» միջնորդութեամբ ինքնուրոյն առողջապահական գրուածքներով կամ թարգմանութիւններով։

Հայ բժիշկները և մանաւանդ հայ բժիշկ ուսանողները, թէ ինչպէս եռանդոտ և դեղեցիկ խօսում են իրենց ժողովներում և մանաւանդ խընջոյքների ժամանակ, երբ գինուց դրանց գլուխները տաքացած են լինում, այդ մենք շատ լաւ գիտենք, բայց ժողովրդին ինչ օգուտ լեզուներ այդչափ պարծենալուց և չիչեր դարդակելուց։

Պ. պ. հայ բժիշկներ և հայ բժիշկ ուսանողներ, թող իմ խօսքերս ձեր սիրտը չը նեղացնեն, չէ՞ որ դուք մեր ժողովրդին բարօրութիւն էք ցանկանում, չէ՞ որ դուք ազնիւ մարդիկ էք և արդարութիւն պաշտպանողներ, ես էլ մի ուղիղ խօսող մարդ եմ, հէնց այդ պատճառով էլ գուցէ չատ ծակեր ունի, համաձայն մասալին, որ ասում է թէ «դրուստ խօսողի գտակը ծակ կը լինի»։

Ուղիղը խօսելով, պէտք է ձեզ ուղիղն ասեմ, որ իմ յոյսս ձեզ վրա էր, երբ սկսեցի հրատարակել «Առողջապահական Թերթը»։

Եթէ «Առողջապահական Թերթի» գոյութիւնը հաճարում էք օգտաւէտ, հրաժարվեցէք ծոյլութիւնից և օգնեցէք յօդուածներով։

Մեր ժողովրդի մի որոշ մասն այնքան զարգացած է, որ մի առողջապահական թերթ մեզանում հեշտութեամբ կարող է պահպանվել և գոյութիւն ունենալ, առանց պարտքի (առաջին տարին ստացել եմ օգուտ 17 ռուբլ, իսկ երկրորդ տարին 48 ռուբլ.), եթէ 2—3—4 անշահասէր բժիշկներ միասին աշխատեն։

Ներկայացրած հաշուից դուք տեսնում էք, որ երկու տարվայ ընթացքում «Առողջապահական Թերթը» տուել է ինձ 65 ռուբլի։ Այնու ամենայնիւ ես առանց վնասելու շարունակում եմ գործը։ Ուրեմն իմ ցանկութիւնս շահասիրական չէ, որովհետև 65 ռուբլին իմ երկու տարվայ չարչարանքի վարձը չէ կարող լինել. այլ իմ միակ ցանկութիւնս է հայ ժողովրդի մէջ, իմ կարողութեանս չափ, տարածել առողջապահական դաղափարներ։ Բայց հայ բժիշկներ և հայ բժիշկ ուսանողներ, շատ և շատ ցանկալի է բոլոր հայերիս, որ դուք ևս ձեր քանքարը չը թաղցնէք, ձեր օգտաւէտ դաս-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՄԵՂ ԶՈՀ ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔԻ

—

Հին ճաշակով շինված, բայց չքեղ զարդարած մի մութ, նեղ և բարձր սառատաղով սենեակում ծաղկից հիւանդ պառկած էր Զ. ընտանիքի միակ որդի տասն և հինգ տարեկան ուսանող Սիմէօնը։ Նրա անկողնի գլխի կողմը ձեռքերը խաչած նըստած էր ծերունի տատը, ոտերի կողմն էր դալկամած, բայց դեռ աշխուժութեան նշոյլները պահպանած մայրը, իսկ չորս բոլորքը շարված էին հարևան ծերունի կանայքը։

Արդէն տասն և երկու օր էր խեղճ երեխան տանջվում էր, բայց ոչ ոքից ոչինչ օգնութիւն չէր ստանում. մնացած էր Աստուծոյ կամքին, կամ «կը հայտնար, կամ կը թուրքանար» այդ նրա ճակատագիրն էր, մտածում էին նրա ծնողները։ Այդ օրը երեխան ամենի նեղ դրութեան մէջ էր. երեսի գոյնը դեղնել, իսկ գծագրութիւնը այլակերպվել էր. մայրը, որ միշտ աչքը յառած նայում էր իր դժբաղդ որդուն, տեսնելով նրա այլափոխվելը և կարծելով թէ արդէն փչեց նա իր շունչը, ծունկ չոքեց և աղիողորմ ձայնով կանչում էր որդուն, իսկ մօտի կանայքը հանգստացրին նրան համոզելով, որ ոչինչ չը կայ, երեխան բաւական լաւ է, իլուր է «լաչառութիւն» անում։ Բայց մայրը չը հանգստացաւ, նա կանչեց իր տան փոքրիկ ծառային և արտասուալից աչքերով ասեց նրան։

—Մուքի, գնա դուքան, աղին ասա, թէ տանից կանչում են. եթէ բան հարցնի՞ յայտնիր որ ոչինչ չը կայ, երեխան էլ լաւ է, ուրիշ ոչինչ չասես, իմացա՞ր...։

Ծառան գլխով պատասխանելով հեռացաւ տիկնոջ հրամանը կատարելու, իսկ հիւանդի մայրը կսկծալի կերպով շարունակեց։

—Երեխաս ձեռից ընկնում է, նա էլ երկար չի ապրելու, թող հայրը դայ և վերջին հրաժարական ողջոյնը ստանայ նրանից։

—Լաւ, աղջի, վրա բերեց պառաւներից մէկը—Աստուծուն մի բարկացնի, ինչ է եղած, մեռնեմ նրա հրեշտակին (երեսները խաչահանում են), լաւ կը լինի. այդպէս բաներ իսկի մի ասի, որ տան հրեշտակին էլ չը ջգրացնես։

Հիւանդի մայրը, որ կոչվում էր Մարիամ, ոչինչ չը պատասխանեց, միայն ձեռքերը դէպի երկինք բարձրացնելով, օգնութիւն էր խնդրում Աստուածանից։

Կէս ժամից յետոյ եկաւ տան հայրը—Ստեփանը։

—Հէյ, ոնց է, ինչպէս է Սիմէօնը, հարցրեց նա։

—Կայ էլի, պատասխանեց ծերունի տատը—ոչինչ չը կայ, լաւ կը լինի, ծաղիկ է էլի։

—Ինչպէս թէ ոչինչ չը կայ, ասեց մայրը, ահա տես երեխայի աչքերը կուլ են գնացել. երեխան ձեռից գնում է, էլ մերը չի դառնալու, ասեց և թաշկինակը աչքերին սեղմելով սկսեց հեկեկալ։

Ստեփանն էլ մնաց սառած տեղը կանգնած. նա նոյնպէս աչքերը լցրեց արտասուքով. միայն պառաւ տատն էր, որ բոլորովին սառնարիւն էր գանվում և նախատում հիւանդի ծնողներին, որ իզուր են արտնջում և գուցէ դորանով էլ կը բարկացնեն ծաղկի հրեշտակին և հետևանքը դժբաղդ կը լինի։ Բայց ծնողական սէրը ի հարկէ չէր թողնում նրանց հանգստանալ. նոքա իրանց սրտերին հովութիւն էին տալիս միայն կսկծալից լացով։

—Ախր էս ինչ անենք Է... ուղարկեմ բժիշկը դայ, ինչ անեմ... ասեց հայրը։

—Ո՛... գժվել ես, աղայ, էդ ինչ ասեցիր. ծաղկին բժիշկ, ուֆ, մեղայ Աստուծոյ, լաւ է լաւ, էդ ասեցիր, էլ ուրիշ անգամ բերանիցդ չը հանես...։

—Աղջի, ծաղկին բժիշկ ով է տեսել, շարունակեց ծեր տատը դառնալով դէպի մուս համասեռները.—60 տարեկան կնիկ եմ ամա, հալա էսպէս բան չեմ լսել. մեղայ քեզ Աստուած, ներիր Գաբրիէլ (հրեշտակ), քո ոտի հողն եմ, չիմացաւ և սխալվելով ասեց, ներիր, խնդրում եմ։

Ստեփանը լսելով պառաւի այդ աղերսանքը շատ զղջաց իր ասածի վրա և ինքն էլ ջերմեռանդագին սկսեց մեղայ գալ։

—Որդի, սկսեց Հռիփսիմէ տատիկը, քանց բժիշկն ես ասում, հաղիր ուղարկիր մեր խնամի տէր Ներսէսը գայ մի գլուխ Աւետարան կարդայ։

Դժբաղդ հայրը պատրաստ էր իր կեանքն անգամ զոհել իր դժբաղդ որդու համար. նա ամենայն մարդու ասածը խակոյն կատարում էր. այս անգամ էլ առանց յապաղելու ուղարկեց կանչել տալու տէր Ներսէսին, որի տան միջին յարկում ապրում էին իրանք։

Տէր Ներսէսը արդէն մի քանի անգամ եկել էր հիւանդի գլխին Աւետարան կարդալու, այժմ նա չը ղլացաւ, իսկոյն առնելով Աւետարանը, չտապեց հիւանդի մօտ։

—Հէ՛... ինչ է, ինչպէս է երեխան։

—Լաւ է քո օրհնութիւնով. արի մի գլուխ Աւետարան էլ կարդա վրան, լաւ կը լինի, պատասխանեց տատը։

Տէր հայրը փոքր ինչ փքվելով ասեց։

—Այս բոպէիս, ահա Աւետարանի լաւ գլխից կը կարդամ, և շատ լաւ կը լինի, իսկի հոգ չը տանէք։

Եւ սկսեց կարդալ. յետոյ «պահպանիչով» վերջանելով, դարձաւ դէպի Ստեփանը։

—Շատ հոգ մի անիր, լաւ կը լինի. լաւ Աւետարան կարդացի. դա ծաղիկ է, դա իր հրեշտակը ունի և ինչպէս երևում է բարի հրեշտակ է, միայն չը բարկացնէք նրան և լաւ կանցնի։

—Տէր հայր, ընդհատեց տատը, ախր էն վախտ Ստեփանը ուզում էր բժիշկ բերել տալ։

—Ո՛... ինչ էք հրամայում. խեղճ չէք դուք, կամ ձեր հարևանները. հիմա ուզում էք երեխային, դօկտոր մօկտորի ձեռք դցելով հրեշտակին ջըգրացնէք, որ կամ ձեր գլխին թափէ իր բարկութիւնը, կամ հարևաններիդ. չէ.. չէ. ախր դօկտորը ինչ պէտք է անէ ծաղկոտ երեխային է՞...։ Դուք պիտի գիտենաք, որ Աւետարանը ասում է, թէ «ծառի տերևը անգամ վէր չի ընկնում առանց Աստուծոյ կամ նրա հրեշտակների կամքի». հիմա դուք ինչ էք մտածում, որդիք, եթէ Աստուած կամենում է՝ կապրացնի, եթէ ոչ, չէ թէ դօկտոր, թէ կուզ պրոֆէսորներ բեր, ոչինչ չի լինի—ասեց և աւետարանը մօտեցնելով Ստեփանին՝ շարունակեց.

—Համբուրիր, համբուրիր Աւետարանը և մեղայ եկ։

Խեղճ հայրը չը գիտեր ինչ անել և որպէս մեղայ գալ. նա խիստ մոլեռանդաբար համբուրելով Աւետարանը, ձեռքերը դէպի երկինք տարածեց և արտասուքի կաթիլներ թափելով սկսեց ծաղկի հրեշտակից ներողութիւն և ողորմութիւն խնդրել իր ասած խօսքի համար։

Տէր Ներսէսը բարի առողջութիւն մաղթելով հիւանդին՝ գնաց, իսկ նրա յետևից կանայքը զարհուրած տէրտէրի կարճ քարոզից՝ փսփսում էին մէկ մէկու ականջին և ասում.

—Տեսա՞ր, աղջի, ինչ մեղք գործեց Ստեփանը,

դափարներից մասն ու բաժին հանէք հայ ժողովրդի համար:

Սպասում եմ ձեր յօդուածներին:

«Առողջապահական Թերթի» յառաջադիմութիւնը պատիւ կը բերի ձեզ, իսկ յեռաղիմութիւնը կը լինի մի յայտնի ապացոյց, որ դուք, երիտասարդ հայ բժիշկներ և բժշկացուներ, լոկ խօսքի և չահի մարդիկ էք և ոչ գաղափարին ծառայող, անշահասէր բարեկամներ ժողովրդի, որին պատկանելու պատիւ ունէք:

Մենք մեր կողմից կը շարունակենք մեր գործը և կը սպասենք:

Խմբագիր բժ. Լեոն Ցիգրանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Кавказъ» լրագրում կարդում ենք հետեւեալը. «Թիֆլիսի կաղեմնայա պալատան պատիւ ունի յայտնել Թիֆլիս քաղաքում առևտրով, արդիւնաբերութեամբ և արհեստներով բոլոր պարապողներին, որ քաղաքային վարչութեան համաձայնութեամբ, ե կ ո ղ փ ե տ ր վ ա ր ի չ ո ր ս ի ց, նշանակված է Թիֆլիս քաղաքի առևտրական, արդիւնագործական և արհեստից հիմնարկութիւնների ընդհանուր ստուգութիւն (повѣрка), առևտրական մասի վերաբերեալ պալատայի առանձին յանձնարարութեանց պաշտօնեաների մատակարարութեամբ, որոնք կունենան պատշաճաւոր թղթեր, առևտրական պատգամաւորութեան անդամների հետ վերոյիշեալ հիմնարկութիւնները մտնելու համար, համաձայն մաքսահարկերի վերաբերեալ կանոնադրութեան 101 յօդուածի առևտրի և արուեստների իրաւունք ունենալու համար: Այդ բանին պալատան հարկաւոր է համարում աւելացնել, որ քննութիւն կատարելու ժամանակ, առևտրական, արդիւնաբերական և արհեստից հիմնարկութիւններում պէտք է գտնվեն վարչութիւնները կամ նրանց գործակատարները պահանջվող բացատրութիւնները տալու համար:

—

Այսօր, փետրվարի 2-ին, Արծրունու թատրոնում հայ դերասանական խումբը կարգադրութեամբ պ. Զմշկեանի կը ներկայացնէ յօդուա պ. Թուրեանի «Կողոպտված Փոստ կամ Լիսնի սարհանդակը», դրամա 5 արարուածով և 8 պատկերով, թարգ. Ֆրանսէրէնից: Ցուսով ենք, որ հասարակութիւնը համակրութեամբ կը վերաբերվի պ. Թուրեանին, որ ներկայ թատրոնական սեզոնի ընթացքում բարեխղճութեամբ աշխատեց բեմի վրա և որը օտար երկրացի լինելով, անկասկած կարօտ կը լինի հասարակութեան քաջալերութեանը: Տեղերի գինը սովորական է:

—

«Новости» լրագիրը հաղորդում է, որ Կովկասեան կառավարչապետը անցեալ տարվայ կառավարչական կարգադրութեամբ պէտք է օգնական ունենար, որը մինչև այժմ չէր նշանակված: Այժմ, ինչպէս լսել է վերոյիշեալ լրագիրը այդ պաշտօնը յանձնված է գեներալ-լէյտենանտ Ս. Ա. Շերէմէտիեվին:

—

«Новое Обозрѣніе» լրագրի մէջ կարդում ենք հետեւեալը: Մեր լրագրի «Մաքսային խուզարկութեան առիթով» երէկվայ յօդուածի մէջ, չտապելուց մենք չը յիշեցինք այն կանոնները, որոնցով որոշվում է մաքսատան պաշտօնեաների ձեռքով որպէս կոնտրաբանդ կալանաւորված ապրանքների վիճակը: Գործը քննիչին յանձնելու հետ միաժամանակ, այդ ապրանքները, որոնց մանրամասն ցուցակը և գնահատութիւնը արդէն կազմված է, ուղարկվում են մաքսատուն, եթէ մաքսատունը գտնվում է հանման տեղից (выемка) ոչ հեռու հարիւր վերստով: Մաքսային վերահաստատեան օր նշանակելով, քննիչը տեղեկացնում է այդ բանի մասին մաքսատունը և միջոց է տալիս մեղադրվածին նշանակած ժամանակամիջոցին ներկայանալ մաքսատուն ներկայ լինելու համար քննութեան ժամանակ, եթէ նա այդ կը ցանկանայ: Վերահաստատիչը վերջացնելուց յետոյ, կալանաւորված ապրանքները դարսվում են հակերի կամ արկղների մէջ և կնքվում են մաքսատան և ապրանքատիրոջ կնիքներով, մինչև որ դատարանը կորոշի նրանց ապագայ վիճակը: Ապրանքների յարքունիս գրաւելը, նոյնպէս և նրանց ազատութիւնը այլ կերպ չէ կատարվում, եթէ ոչ դատարանի որոշմամբ: Ասում են և մինչև անդամ գրում են «Դրօէբա», լրագրին, որ ապրանքները իբրեւ ժամանակ չը գործադրվեցան բոլորովին օրէնքով որոշված ձեւերը. ապրանքները վերցրին պարզ կերպով, առանց կազմելու այդ ապրանքների ոչ միայն պատշաճաւոր գնահատութիւնը, այլ մինչև անդամ և հասարակ ցուցակ: Եթէ այդ այդպէս է, ուրեմն ապրանքների այդ ձեով խլելը, ի հարկէ, բոլորովին չէ համապատասխանում խուզարկութեան կամ հանման օրինական հասկացողութեանը, այլ պարզապէս օտարի կայքի ինքնակամ սեփականացնելն է: Մենք կատարելապէս տարակուսում ենք, թէ մաքսային վարչութիւնը ինչպէս կը դուրս դայ այն անթիւ դժուարութիւններից, որ անկասկած, կը պատահեն ապրանքները իրանց տէրերին վերադարձնելու ժամանակ, որոնք օրինապէս չէին ազատվված, թէ դրանց վերադաձվում է հէնց այն ապրանքը և հէնց նոյնքան, ինչ ապրանք և որքան նրանցից խլված էր:

—

Պ. Աբել Ալրէտեանց խնդրում է մեզ տպել հետեւեալը. «Գործակատարի յիշատակարանից» աշխատութիւնը առաջիկայ կիրակի օր կուղարկվի գաւառական քաղաքները մեր բաժանորդներին: Այդ երկրորդ գիրքն է, որ ես «հաշուապահութեան» գրքոյկի իմ հրատարակութիւնը չը յաջողվելուց յետոյ տալիս եմ մեր բաժանորդներին ներանցից ստացած բաժանորդագնի փոխարէն: Կրկին ինձ մատ մնում է հին բաժանորդների իւրաքանչիւրից մի բուբլի, որի մասին ես շատով կարգադրութիւն կանեմ: Թող պ. պ. ստորագրողները ներեն ինձ, եթէ ես մի փոքր ուշացրի նրանց գրքերը: Բայց ես երբէք թայլ չեմ տայ ինձ մեր հայերից ստացած այդ փողերի վերջին կօպէկի հետ անդամ անազնութեամբ վարվել, ինչպէս այդ ուզեցել էին հաստատել մի քանի անձինք իմ ծանօթ շրջաններում»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Polit. Cerresp.» լրագրին Կ. Պոլսից յունվարի 18-ից հեռագրում են, որ հայոց պատրիարքը յանձնեց Բ. Դրանը մի խնդրագիր, որ հայոց եկեղեցական խորհուրդը խնդրում է Թիւրքայ կառավարութիւնից, անձեռնամխել թողնել հայոց եկեղեցու զարեւոր իրաւունքները և արտօնութիւնները: Խնդրագրի մէջ նոյնպէս յայտ է յայտնում, որ Թիւրքայ կառավարութիւնը ի նկատի կառնի հայերի զարեւոր հաւատարմութիւնը, որոնք մինչև այժմ երախտագէտ են եղել Թիւրքիային, որի հովանաւորութեան տակ նրանք միջոց են ունեցել պահպանել իրանց կրօնը, լեզուն և ազգութիւնը:

—«Times» լրագիրը, առաջ բերելով այն փաստը, որ Բաշիլդի տունը հանձնեց եգիպտական կառավարութեանը տալ պարտքով մօտ մէկ միլիոն ֆունտ ստէրլինգ, նկատում է, որ նշանաւոր ֆինանսիստների այդ ձեռնարկութիւնը ապացուցանում է, որ նրանք հաւատում են Եգիպտոսի աւելի լաւ ապագային: Վերջը «Times» ասում է. «Անդլիան իր ձեռքն առնելով երկրի կառավարութիւնը, կօգնէ նրան առաջն առնել այն դժուարութիւնների, որոնց նա այժմ ենթարկված է: Օրիցօր ակներև է լինում, որ այդ բանը իրագործվելու է և կիրագործվի: Մենք չենք կարող հեռանալ Եգիպտոսից: Նրան այժմ թողնելը կը նշանակէ նրան աւելի վատ անիշխանութեան ենթարկել, քան թէ Եգիպտոսը գտնվում էր Արաբի-փաշայի ժամանակ:

—Վերջին ժամանակներում շատ էին գրում Զերնոգորիայի ղնեւորութիւնների մասին: Այդ առիթով Զերնոգորիական պաշտօնական թերթը մի խաղաղասէր յօդուած տպեց, որի մէջ ի միջի այլոց ասված է. «Զերնոգորիան այս տարի էլ կը հետեւի խաղաղասէր քաղաքականութեանը, որ իշխան Նիկոլայ կատարելապէս անհրաժեշտ է համարում: Զերնոգորիան շատ լաւ գիտէ իր ոյժերի չափը և հասկանում է, որ քաղաքական յարաբերութիւնների հաստատութիւնը կախված է չիտակ քաղաքականութիւնից: Աւստրո-Ունգարիան մեծ նշանակութիւն ունի Զերնոգորիայի համար ոչ թէ իբրև դրացի պետութիւն, այլ և այն պատճառով որ Բերլինի դաշնագրի ստորագրելուց յետոյ այդ պետութիւնը ազդեցութիւն ունի Բալկանեան թերակղզու գործերի ընթացքի վրա: Իշխան Նիկոլայ մինչև անդամ 1878 թուականին կարողացաւ բարեկամական յարաբերութիւններ պահպանել Աւստրո-Ունգարիայի հետ:

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Զրաղանի պալատի կառուցումն վերջացնելուց յետոյ իսկոյն, Կ. Պոլսում լուրեր տարածվեցան, որ այդ պալատը կառուցանող ճարտարապետը, հայազգի Սարգիս-բէյ Պալեան, կեղծ հաշիւների և ցուցակների օգնութեամբ, կողոպտեց սուլթանի գանձարանից մօտաւորապէս 35 միլիոն պիաստր դումար: Այդ գործի քննութեան համար առանձին յանձնաժողով նշանակվեցաւ, բայց Սարգիս-բէյը այդ ժամանակ արդէն կարողացաւ անյայտանալ Կ. Պոլսից և, ոչքան յայտնի է, այժմ Փարիզում է գտնվում: Քննող յանձնաժողովը հաշիւների մեծ մասը կեղծ համարեց, որի պատճառով բացակայ գտնվող ճարտարապետը դատաստանի ենթարկվեցաւ և անցեալ շաբաթ դատապարտվեցաւ հինգամեայ բանտարկութեանը, 70 միլիոնի վճարմանը որպէս վարձատրութիւն վնասների փոխարէն և բոլոր իրաւունքներից զրկվելուն:

* * *

Լօնդօնում նորերումս այրվեցաւ «Variety» թատրոնը: Զը նայելով որ բազմաթիւ հրդեհաշէջներ իրանց գործիքներով օգնութեան հասան և աշխատում էին կրակը հանգցնել, սակայն թատրոնը կատարելապէս այրվեցաւ: Վնասը մօտ 40,000 ֆ. ստերլինգի է հասնում:

* * *

Ոչ մի քաղաքի մէջ, ասում են, փաստաբանների այնպիսի առատութիւն չը կայ, որպէս Պէշտում: Վիենայում փաստաբանների թիւը 597 է, իսկ Պէշտում 688. Այդ անհամաչափութիւնը կատարելապէս հասկանալի կը լինի, եթէ համեմատենք փաստաբանների թիւը ազգաբնակութեան քանակութեան հետ: Ամբողջ Ունգարիայում, իր 15,600,000 հոգի ազգաբնակութեամբ, 4,600 փաստաբաններից աւելի կան: Իսկ Ֆրանսիայում բոլոր փաստաբանների թիւը 2,251, Պրուսիայում մօտ 2,200. Հետևաբար, երկու երկիրներն էլ, միասին վերցրած, 62 միլիոն բնակիչներով, ունեն ա-

---

լաւ է տերտերը եկաւ, աւետարան կարդաց, թէ չէ, Աստուած մի արասցէ ինչ կը գար սրա և մեր երեխանց գլուխը:

Անցան ևս մի քանի օրեր, հիւանդի դրութիւնը առ երես անփոփոխ էր երևում. ամենայն օր հաւաքվում էին հարևան կանայքը և զանազան դատողութիւններ անում, վերջը նրանք այն եզրակացութեան հասան, որ իբր թէ «ծաղկի անգութ հրեշտակը» զայրացել է, ուստի չարչարում է երեխային և առողջութիւն չէ տալիս: Այդ պատճառով էլ խորհուրդ արին, որ պառաւ տատը, Հռիփսիմէն, գնայ Հալաբար երկու հմայողներից մէկի մօտ այդ մասին տեղեկութիւն ստանալու:

Միւս օրը առաւօտը կանուխ Հռիփսիմէ պառաւը դժուարութեամբ բարձրանում էր Հալաբարի դարիվերովը. նա հասնելով հմայողի տանը խնացում տուեց, որ ուզում է նրա հետ տեսնվել և պատասխան ստացաւ, որ այցելուներ կան, փոքր ինչ սպասէ. պառաւը սպասում էր:

Հմայող-քաղդիմացը մօտ 70 տարեկան մի պառաւ էր. նա ծալապատիկ նստած էր իր աղքատիկ խրճիթում մի հնամաշ դորգի վրա. երեսը ծածկած էր մի թափանցիկ քողով, որը հարկաւոր դէպքում քաշում և իր դէմքը պարզ ցոյց էր տալիս այցելուներին. նրա երեսի դծագրութիւնը այնքան անճոռնի էր, որ մինչև զարհուրանք վախեցնում էր անփորձ այցելուներին:

Հռիփսիմէ տատիկի սպասելու ժամանակը այդ «փալչի» կնոջ մօտ էին հաւաքարցի երկու երիտասարդ օրիորդներ, որոնք գնացել էին իրանց բաղդը իմանալու: Թէև ընդունված էր, որ նրան առանձին առանձին պիտի ներկայանային այցելուները, սակայն այս երկու օրիորդները կանխապէս թոյլտվութիւն էին խնդրել միասին մտնելու, յայտնելով որ երկուքն էլ մի և նոյն նպատակի համար են եկած և որ քոյրեր են:—Խարդախ պառաւը հարցնելով նրանց անունները և տեղեկանալով նրանց օրիորդ լինելը, սկսեց գործը:

Նա խոյսն այլակերպվեցաւ, քողը ծածկեց երեսին, աչքերը խփեց, սկսեց դէս ու դէն շարժվել, բերանը ծռմռել, հառաչներ քաշել, երևակայական ոգիների հետ անհասկանալի բառեր արտասանել, զարհուրել և այլն, և վերջը հետզհետէ հանդստանալով դարձաւ դէպի օրիորդները.

—Նատա, քո բաղդի վրա լոյսի մի շող է երևում. բայց մէկը ս և փ ո ղ ը բռնած ձեռին ուզում է այդ լոյսի առաջը կապել, մթնացնել. տեսնեմ վերջն ինչ է լինելու:

Ասեց, ծածկեց երեսին քողը և սկսեց դարձեալ այլանդակվիլ. իսկ այդ միջոցում Նատան հասկանալի ձայնով ասում էր իր ընկերուհուն.

—Սօնա, տեսար ինչ լաւ իմացաւ, էդ իմ փեսացուն է, որ փողի համար ուզում է յետ կենալ. դիտես, անցեալ օրը պէտք է նշան բերէր, բայց մէկ էլ փոչմանեց. եկաւ մեծ եղրօր հետ և պահանջում էր, որ իմ 30,000 բուբլի օժիտը և հօրս միւս մնացած բոլոր կայքերը նախ նօտարիուսով նրա վրա կտակենք և ապա պսակվի, բայց հայրս չընդունեց. ամա ես հաւանում եմ այն տղին, որովհետև բժիշկ է, թէև.... տեսնենք ինչպէս է լինելու. որ ճար չը լինի հօրս պիտի խնդրեմ, որ զիջանի փեսայի պայմաններին. ինչ անեմ. թող պըսակվեմ, ես այդ վիրաւորանքը ինձ վրա չեմ թողնի. հիմա որ ինքն իրա ասածն է ուզում անել և փոդրս է ուզում և ոչ ինձ, այն ժամանակն էլ ես նրան ցոյց կը տամ, որ ես էլ միայն բժշկի կին անունը կրելու համար գնացի և ոչ իրան սիրելու համար... վերջապէս, թող տեսնենք դեռ ինչ է ասելու այս գաղտնագէտ կնիկը. եթէ լաւ դուշակեց, մի մանէթ պիտի տամ, եթէ չէ, 20 կօպէկ իրա հաշն է (վարձն):

Մի քանի րոպէից յետոյ պառաւը դարձեալ քաշեց երեսի քողը և ասեց.

—Նատա, էն փողը պահում է մի աւելի մեծ հասակով մարդ, իսկ մի փոքրը ուզում է ձեռը քաշել, ճանապարհ բանալ և անցնել. երկար վիճում էին մէկ մէկու հետ, վերջը փոդը բռնած ձեռքը քաշվում է և երիտասարդը վառած մոմը ձեռին մտնում է քեզ ուրեմն բախտդ լաւ է լինելու:

Նատան անչափ ուրախացաւ, տուեց մի բուբլին և խնդալով դուրս գնաց:

Մի քանի այցելուներից յետոյ հերթը հասաւ Հռիփսիմէ տատին. նա ներս մտաւ:—Նրանք անձամբ ծանօթ էին միմեանց.

—Բարով, Հռիփսիմէ, ինչ ես, լաւ ես, ինչպէս է թոռդ:

—Է՛, Աստուած գիտէ, լաւ չէ երևում. հէնց դրա համար էլ եկել եմ մի տեսնեմ ինչպէս է դառնալու:

—Լաւ ես արել. ամա Հռիփսիմէ ջան, ես ինչ լինի դրուստը պիտի ասեմ. սուտ ասել չեմ կարող, որովհետև սուրբերը, գիտես սուտ չեն սիրում, կը չարանան ինձ վրա և էլ չեն օգնի ինձ այդ բաները իմանալու. ուրեմն սիրտդ պինդ պահիր, չը նեղանաս, եթէ մի բան լինի:

—Ինչ նեղանալու բան կայ, ընդհատեց Հռիփսիմէ տատը:

—Գէ, հիմա մի աստ տեսնեմ դրուստ քանի օր է, որ երեխան ծաղկից ընկել է:

—Դուզ (ուղիղ) 20 օր է էսօր. մի լաւ տես, քո հոգուն մեռնեմ, մի տես խոմ հրեշտակը չի ջըգրվել մեզ վրա:

—Ինչու, ինչ էք արած:

—Ոչինչ, բայց Ստեփանը ուզում էր բժիշկ բերել տալ, հէնց դրա համար:

—Վայ...ինց կը լիներ ծաղկին բժիշկ. էդպէս բան կանեն. դուք էլ հօ երեխայ չէիք, ինչու թողեցիք բերի:

—Չի բերել, ասում եմ ուզում էր բերի:

—Դէ լաւ. թող տեսնեմ, ասեց և դարձեալ քողով ծածկվելով սկսեց իր սովորական դերը կատարել. յետոյ բանալով երեսը, ասեց:

—Հռիփսիմէ ջան, երեխայի բաղդի մի կողմը սև է երևում. այդ սև կողմում կանգնած էր մի թեւաւոր մարդ (չէր ուզում ուղղակի հրեշտակ ասել), որը առաջ քիչ ուրախ էր, իսկ փոքր ժամանակից յետոյ յօնքերը մթնացրեց ու ինքն էլ սկսեց տխրել:

—Վայ ես քոռանամ—բացականչեց Հռիփսիմէ տատը—էն, ինչպէս երևում է, երեխայի հրեշտակն էր. գնամ մի մոմ վառեմ, աղաչանք ու պաղատանք անեմ, կարելի է խղճայ, ասաց և վեր կացաւ գնաց տուն:

Այդ օրը հիւանդը աւելի ևս ծանրացել էր և զանգատվում էլ էր, որ կոկորդում ցաւ է զգում և ջուր ու թուքն անդամ դժուարութեամբ են կուլ գնում:

Ի հարկէ դրա վրա էլ ոչ ոք ուշ չը դարձրեց: Հետեւեալ օրը երեկոյեան երեխային այցելութեան եկան տան ծուխի քահանան. տէր-Միքայէլը և հիւանդի մօրաքրոջ փեսան, որոնք տեսնելով հիւանդի անել դրութիւնը սիրում էին ծնողներին բժշկի օգնութեանը դիմել, բայց ուր... Պառաւ տատիկը լսելով այդ, սաստիկ անբաւական մնաց այցելուներից և քահանային էլ «Փարմասիօն» անուանեց, որ նա տէր-Ներսէսի կարդացած աւե-

ւելի սակաւ փաստաբաններ, քան միայնակ Ունդարիան։ Այդ անհաւասարաչափութիւնը մի փաքր վտանգաւոր է, որովհետև ոչ մէկ դասակարգի մէջ այնքան հեշտ չէ կազմակերպվում մտաւոր բազմաթիւ պրոլէտարիատ, որպէս փաստաբանների դասակարգի մէջ։

* * *

«Հարաւ—Ունդարական Լլոյդին» հեռագրում են Կրայովից (Ռումինիայում), որ այնտեղի թատրոնում, յունվարի 13-ին, ներկայացման ժամանակ մի ռումբ զցեցին։ Այդ բանից առաջացած սարսափը աւելի ևս սաստկացաւ մի և նոյն ժամանակ տարածված լուրի պատճառով հրդեհի մասին։ 7 մարդ սպանվեցաւ։ Բացի դրանից բազմաթիւ անձինք վնասվեցան։

* * *

Մի գերմանական լրագիր պատմում է, որ ֆրանսիական երկու նշանաւոր գրողները՝ Էմիլ Զօլա և Ժիւլ Կլարէսի մի ժամանակ շատ բարեկամ էին և գովում էին միմեանց տաղանդները այն լրագիրներում ու առնագիրներում, որտեղ իրանք աշխատակցում էին։ Մի անգամ, երբ Էմիլ Զօլան տպեց իր վերջին բոմանների մէկը, Ժիւլ Կլարէսի ստացաւ նրանից մի նամակ, որի մէջ ասված էր, ի միջի այլոց. «Արէք իմ գրքի համար բոլորը, ինչոր կարող եք... Դուք հօ գիտէք հեռեակ առածը—ձեռքը ձեռք է լուանում...» Կլարէսին աշխատեց նոր գրքի մասին մի շատ գովասանական յօդուած գրել, բայց մի քանի ժամանակից յետոյ երկու բարեկամների մէջ մրցումն սկսվեց, որը սկզբում սառեցրեց նրանց յարաբերութիւնները, և ապա բոլորովին անջատեց նրանց։ Էմիլ Զօլան չը յաջողեց մի թատերական կրիտիկա գրել Կլարէսիի հեղինակութիւնների մասին։ Նա ի հարկէ կատաղած էր Զօլայի այդպիսի վարմունքից և անդիմաբար վրէժխնդիր եղաւ իր բարեկամից։ Նա ֆրանսիական յայտնի լրագիրներից մէկի մէջ արտեց Զօլայի նամակը, որի մասին մենք յիշեցինք, և իրանից աւելացրեց միայն հեռեակ տողերը. «Պէտք է ենթադրել, որ ես բաւական մաքուր չեմ լուանում պ. Զօլայի ձեռքերը։ Ժիւլ Կլարէսի»։—Յայտնի չէ, ի հարկէ, թէ որքան ճիշտ է այդ պատմութիւնը, բայց այնու ամենայնիւ դա ապացուցանում է Ֆարիզի ամենախտելիզէնտ մարդկանց ցինիզմը և ինչնութիւնը և լաւ է բացատրում հեռեակ առածը՝ ամեն փայլող բան ոսկի չէ։

* * *

Ցաջող ամուսնութիւն։—Երկու բարեկամներ փողոցում հանդիպում են միմեանց։—Ես լսեցի, որ դու պսակվում ես։ Ճիշդ է,—հարցնում է մէկը և հաստատական պատասխան լսելով, շարունակում է հարց ու փորձ անել։—Եւ ընտանիքը, յուսով եմ, լաւն է։—Այո, կատարելապէս լաւը։ Աղջիկը հիանալի է։ Հայրը դիտմամբ մոռնկացած մարդ է, ճշմարիտ է... Եղբայրը նորերումս դատվում էր խաբէութեան համար... Քոյրը յայտնի չէ որտեղ է...—Իսկ նորահարսը։—Իսկ նորահարսը երկու արդի է ունեցել... Բայց իսկապէս ընտանիքը հիանալի է...

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱՅՈՒԹԻՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 յունվարի։ Ի նկատի առնելով Օսարօվսկու մատուցած ծառայութիւնները դրամատիկական թատրոնին, թագաւոր Կայսրը շնորհեց Նրան 3000 ռուբլ տարեկան թոշակ ամբողջ կեանքի ժամանակ։ Շաբաթ Նեվսկի մեքենայական գործարանից վերջնականապէս արձակված են բաւորները, որոնք թուով 1800 հոգի են։ Բանւորներին յայտնված է, որ կառավարութիւնը ամեն բան կանի նրանց վիճակը թեթեւացնելու համար։ Առժամանակ ցանկացողներին առաջարկվում է բռնել 650 տեղեր ծովային բաժնի, ռուսաց երկաթուղիների գլխաւոր ընկերութեան և մասնաւոր երկաթուղիների գործարանների մէջ։ Քաղաքապետը հրամայեց մի շաբաթվայ ընթացքում տալ իւրաքանչիւր բանւորին 20 կ., կնոջը նոյնքան և իւրաքանչիւր երեխայի համար 10 կ.։ Օրերումս հաստատվեցաւ Մուրմանի կիտառոս արդիւնաբերութեան ընկերութեան կանոնագրութիւնը։ 1882 թուականին հիմնված այդ ընկերութիւնը սկզբից չէր հասնում նպատակին։ Բայց այժմ, մեծացնելով իր հիմնական մայր դրամը, մտադիր է գործը աւելի ընդարձակ չափերով տանել և եռանդով մրցել նորվէգացիների հետ։ Երեկ կայացաւ Բուբինշտէյնի հեղինակած “Նէրօն„ նոր օպերայի առաջին ներկայացումը։ Վաղուց Ս. Պետերբուրգի թատրոնների մէջ այդպիսի հանդէս, այդպիսի աղմկալի և արժանի ցոյցեր չեն եղել։ Օրկէստրը կառավարում էր ինքը հեղինակը։ Երկրորդ արարուածից յետոյ իտալական երգիչները հանդիսով մատուցին Բուբինշտէյնին դափնէ պսակ։ Օպերան շատ լաւ կատարվեցաւ։ Մանաւանդ լաւ էին հանդիսաւոր գնացքը և Հռոմի հրդեհը։ Անվերջանալի դուրս էին կանչում։

ԼՕՆԴՕՆ, 30 յունվարի։ Զուլուսների թագաւոր Սէտիվայօի մահուան լուրը հաստատվում է։

ՕԴԷՍՍԱ, 31 յունվարի։ Կամաւոր նաւատորմը ձեռք բերեց Անգլիայի մէջ մի նոր շոգենաւ ամբողջապէս պողպատից, որ կառուցված է մի տարի ու կէս առաջ։ Օրերումս ուղևորվում է Լօնդոն “Петербургъ„ շոգենաւի հրամանատարը 40 նաւատիներով նոր շոգենաւը Օդէսսա բերելու համար։

ՆԷՐՉԻՆՍԿ, 31 յունվարի։ Այսօր գիշեր այրվեցաւ տունը, որտեղ գտնվում էր հեռաւակ կօզակների զինուորական երրորդ բաժինը և քննիչ մանաժողովը զինուորական վարչութեան սեղծումների մասին։ Քննիչ մանաժողովի բոլոր գործերը այրվեցան քննութեան տակ եղած անձանց միմեանց դիմադրելու նախկին օրը։

ԹԱՐԿՕՎ, 31 յունվարի։ Այրվում է Մոսկվայի գօստինի դվօր։ Առժամանակ այրվել են մանուֆակտուրայի վեց պահեստներ։ Երկիւղ են կրում, որ բոլորը կայրվեն։ Վնասներ մեծ են։

ՐԻԳԱ, 31 յունվարի։ Այրվեցաւ Կուզնեցովի ֆայտոնի գործարանի բաժինը։ Վնասը 30,000 ռուբլ է։

ԼՕՆԴՕՆ, 31 յունվարի։ Կրիտ կղզու վրա ապստամբութիւն սկսվեցաւ։ Թիւրքաց կառավարութիւնը ուղարկեց այնտեղ Զմիւռնիայից և Սօլոնիկից 5,000 զօրք։

ՎԻԵՆՆԱ, 31 յունվարի։ Արտակարգ միջոցներ մասին, կառավարութեան կարգադրութիւնը՝ քննող մանաժողովի մեծամասնութիւնը առաջարկում է. առաջին կարգադրութիւնը, որ վերաբերում է վարչական միջոցներին կասկածաւոր անձանց և մամուլի մասին, կանոնաւոր համարել իսկ երկրորդը՝ երդուեալների դատարանների մասին ի նկատի առնել։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 յունվարի։ Կառավարական սենատին տուած անուանի Բարձրագոյն հրամանով պատուիրած է. սենատի առաջին բաժնին կից եղած գիւղական գործերի վերաբերեալ հիմնարկութիւնից կազմել առանձին երկրորդ բաժին, կցորդելով նրան սենատի առաջին ընդհանուր ժողովը։ Երկրորդ բաժնի իրաւասութեան առարկաների և գործավարութեան համար գործադրել գիւղական գործերի ոչնչացրած հիմնարկութեան կանոնները, իսկ երկրորդ բաժնից ստացված գործերի վճռելու ժամանակ առաջին բաժնի ընդհանուր ժողովի մէջ գործ է դրվում առաջին բաժնի գործավարութեան եղանակը։ Գեներալ Ռիխտէր գրեթէ բոլորովին առողջացաւ ստացված հարուածից, որ սպառնում էր թոքերի բորբոքումով։ Լուրերի համեմատ ռուսաց ներկայացուցիչների թոյլտուութիւնը մեծ պատին կը տրվի միայն մոսկաւոր թատրոններին ինչպէս մայրաքաղաքների, նոյնպէս և դաւառների մէջ։

ՓԱՐԻԶ, 31 յունվարի։ Տօնկինի Ֆրանսիական եպիսկոպոս Ռիւժինեի հեռագիրը հաղորդում է, որ տեղացիները ջարդեցին մի քահանայի, 22 կրօնուսոյցների և 215 քրիստոնեաների։ Սուակիմ ուղարկվող պատերազմական նաւի հրամանատարին պատուիրած է պաշտպանել ֆրանսիական հպատակներին, բայց չը մասնակցել քաղաքի պաշտպանութեանը։

ԼՕՆԴՕՆ։ 31 յունվարի։ Համայքների ժողովի մէջ Գլադստոն յայտնեց, որ Ֆրանսիայի հետ ոչինչ բանակցութիւններ չեն եղել եգիպտական գործերին միջամտելու մասին։ Վախճանվեցաւ „Times“ լրագրի գլխաւոր խմբագիրը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 յունվարի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 75 կ., երկրորդ 94 ր. 87կ., երրորդ 95 ր., չորրորդ 94 ր. 50 կ., հինգերորդ 94 ր. 87 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 214 ր., երկրորդ 211 ր. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ր. 62 կ., երկրորդ 92 ր. 75 կ., երրորդ 92 ր. 62 կ., ոսկի 8 ր. 44 կոպ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ $23^{11}/_{32}$ պէնս, ռուսաց 100 ռուբլ Համբուրգի վրա արժէ $198^{5}/_{8}$ մարկ, Փարիզի վրա 245 ֆրանկ։ Բօրսայի տրամադրութիւնը աւելի ամուր է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

տարանը անօգուտ էր համարում և ասած խօսքերը ու տուած խրատները անխելք և վերջն էլ խորհուրդ էր տալիս, որ ծաղկի համար բժիշկ կանչեն։

Երեխայի ծնողներն էլ կոյր հպատակ էին նախապաշարմունքի ոյն ծերունի տատիկին, ուստի և չը համաձայնվեցան բժիշկ հրաւիրել։ Այցելուները գնացին։

Հիւանդ երեխան արդէն հառչանում էր այդ դեպքում բժշկի նշանակութիւնը և նրա անհրաժեշտութիւնը, սակայն ճգնաժամի մէջ գտնվելով, չէր կարողանում խօսել, մանաւանդ, որ ամբողջ 20 օր նախապաշարված ծերունիների մէջ գտնվելով և միշտ շրջապատված լինելով նրանցով, չէր համարձակվում յայտնել իր ցանկութիւնը բժիշկ ունենալու մասին։ Նրա կոկորդի ցաւը հետզհետէ աւելանում էր և վերջը այն տեղը հասաւ, որ ոչինչ ուտել չէր կարողանում. իսկ ոչ ոք և այդ դեպքում դարձեալ չէր մտածում բժշկի օգնութեանը դիմել։

Պառաւ տատը միւս պառաւների խորհրդով այդ ցաւը բժշկելու համար առաւ երկու նոր և փոքրիկ ջրի աման և տուեց իրանց հարևան Խաթունին, որ միւս առաւօտը, ինչպէս ընդունված էր, առանց երեսը լուանալու, ոչ ոքի երես տեսնելու և ոչ ոքի հետ խօսելու, գնա ջրաղացի ակնի տակից ջրով լցնէ այդ ամանները և բերէ, միայն այնքան վաղ պէտք է գնար, որ դեռ գեղից ոչ ոք ջուր վեր առած չը լինէր։

Խաթունը կէս գիշերին վեր կացաւ, գնաց և բերեց յիշեալ փրկարար ջուրը. խմեցրին երեխային, բայց ոչինչ օգուտ չը տուեց. հիւանդը ժամէ ժամ ծանրանում էր և կոկորդի ցաւը աւելանում։

Տանու քահանայ տէր-Միքայէլը կրկին անգամ եկաւ իր հօտի հիւանդին այցելելու և տեսնելով, որ երեխան խեղդվում է, երկար ատենապետութիւնից յետոյ ստացաւ հիւանդի ծնողաց համաձայնութիւնը և ուղարկեց մօտակայ մանաւոր հիւանդանոցից բժիշկ հրաւիրելու։ Երիտասարդ հայ բժիշկը առանց ուշանալու ներկայացաւ, մրտնելով սենեակը և տեսնելով այդտեղի սեղմված, ծանր, անմաքուր օդը և հիւանդի վատանգաւոր դրութիւնը, բացականչեց։

—Էլ այսուհետև ինձ ուր էք բերել. խեղճ երեխային մինչև մահու դարբասն էք հասցրել և յետոյ էք կանչում. էլ ինչ օգուտ կարող եմ տալ ես սրան։ Այս ասելով սկսեց խորը քննել երեխային և յայտնեց, որ հիւանդութիւնը ծաղկից դիֆտերիտ է փոխադրվել. յետոյ հիւանդի կոկորդին լեռալս քսեց, փոքր ինչ հանգստացաւ և ասա սկսեց հարկաւոր ըէցէպտը (դեղատոմս) գրել։

—Ը՛... հոգեմ տուտուց գլուխդ, չչնչում էր Հըռափսիմէ տատը, ինքն էլ գիտէ, որ ծաղիկը իրանց խեչքի բան չէ, ասում է ուշացրել էք, էլ ինձ ուր էք կանչել. դե թէ բժիշկ ես, ձեռովդ բան է գալիս, արա էլի, էլ ինչու ես մնանում չհանում (պատճառաբերութիւն) դցում։

Բժիշկը վերջացնելով իր պարտքը և պատուիրելով հարկաւոր անելիքը հեռացաւ։

—Հռափսիմէ տատը դարձեալ սկսեց վատաբանել բժշկին, «փողի թալակ» անուանելով նրա բոլոր արածները։

Դեղատնից բերին գրված դեղօրայքը, սակայն դործադրող չը կար. պառաւ տատը ընդդէմ լինելով դրան, արդէն մի կողմն էր քաշվել, ձեռ չէր տալիս. մայրն էլ տեսնելով որ որդին դժուարութեամբ է ընդունում, դադարեցրեց դեղօրայքի գործադրելը աւելի լաւ համարելով չը խանդարել հիւանդի առանց այն էլ անհանգիստ դրութիւնը։

Միւս օրը դարձեալ եկաւ բժիշկը։

—Գործադրեցիք դեղօրայքը, ինչպէս ասեցի, հարցրեց նա.

—Այո, բոլորը բանեցրինք, պատասխանեց տատը փէշի տակ թագցնելով դեղի ամանները և աչքերը չուռ տալով բժշկի վրա։

Բժիշկը սկսեց էլի քննել երեխային և զարմացաւ, որ իր դեղօրայքը ոչ միայն չեն թեթեւացրել հիւանդի դրութիւնը, այլ և ծանրացրել են, և կարծելով թէ ռուսաց առակի ասածի պէս «борщъ русскому жизнь, нѣмцу смерть» է, փոխեց դեղերը և գրելով մի ուրիշ դեղատոմս դարձեալ հարկաւոր պատուէրները տուեց և հեռացաւ.

Այսպէս շարունակ հինգ օր եկաւ բժիշկը, գրեց դեղօրայքը, բայց հիւանդատէրերը ոչ միայն չէին գործադրում դեղերը, այլ և դեղատնից բերել էլ չէին տալիս. ուստի և երեխայի ցաւը աւելի ևս վատթարացաւ. պարանոցի վրա դրսի կողմից մի խոց ևս աւելացաւ։ Երբ վերջին անգամ եկաւ բժիշկը, խնդրեց դեղը, որ ինքն քսէ երեխայի կոկորդին և միւսն էլ խմեցնէ. հիւանդի ծնողները փոքր ինչ շփոթվեցան և չը գիտէին թէ ինչ պատասխանեն, իսկ տատ փոքրիկ 5 տարեկան աղջիկը, որ հաւաքել և պահել էր բժշկի գրած, իսկ իր տատի դէն ածած դեղատոմսերը, իսկոյն հանեց գրպանից և տուեց բժշկին, կարծելով որ նրանք են բժշկի ուզածը։—Բժիշկը կարդալով և տեսնելով, որ իր գրած դեղատոմսերն են բոլորը միասին, մնաց ապառած։

—Մինթէ իմ գրած դեղօրայքը չէք բերած և գործադրած, հարցրեց բժիշկը.

—Արևուդ մեռնեմ, բժիշկ, պատասխանեց մայրը. առաջին անգամը բերինք, տեսանք որ երեխան մեծ չարչարանքով է ընդունում. ես էլ նեղացայ, էլ ոչ բերել տուի և ոչ էլ գործադրեցի։

—Ոհ... յիմարներ, ուրեմն էլ ինչու էի ես գալիս։

—Վնաս չունի, բժիշկ, վրա բերաւ Ստեփանը—եկել ես վիզիտդ կը ստանաս, ինչու ես նեղանում։

—Ինձ հարկաւոր չէ ձեր վիզիտը, ես դրա համար չէի իմ կեանքս այդ վարակվող հիւանդութեան վոնդին ենթարկում և գալիս այստեղ. իմ կեանքս ձեր վիզիտների փողից շատ թանգ արժէ. բայց իմ սուրբ պաշտօնս և պարտաւորութիւնս հարկադրում էին ինձ գալ և ես էլ գալիս էի... խեղճ երեխայ. աւելացրեց բժիշկը—դու կը մեռնես քո ծնողաց յիմարութեանց պատճառով, և արտասուալից աչքերով առնելով գլխարկը դուրս գնաց։

Միւս օրը եկեղեցու զանգակները տխուր հնչեցին և խեղճ Սիմէօնի դագաղը իր ընկերակից աշակերտներով շրջապատած առաջնորդում էին դէպի եկեղեցին ժամերգութիւնից յետոյ անմեղ մարմինը հողին յանձնելու։ Հիւանդի ծնողները փոքր ինչ մեղաւոր էին։ Հիւանդի ծնողները աղերսալից լացում և իրանց մաղերը փետում էին։

Այստեղ ներկայ էր և բժիշկը, որը վերջին անգամ մօտենալով մեռեալի դագաղին, արտասուք թափելով դարձեալ կրկնեց։

—Ափսոս, անմեղ երեխայ. դու իզուր տեղը կորար զոհ գնալով ծնողացդ նախապաշարմունքներին և յիմարութիւններին. խեղճ դու, գնա, հանգիստ քեզ։

Յովհաննէս Ստեփանեանց

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԷՑ ԱՌԱՋԻՆ ՀՈՒՆՁԻ այս տարի չափազանց **ԳՈՑՆԱՒՈՐ ԵՒ ՀՈՏԱՒԷՏ**։ Այդ թէյից ստացված է **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ 50,000 **ՖՈՒՆՏ** և ծախվում է 25% էժան քան թէ ուրիշ տեղ, այսինքն լաւ ԿՕՆԳՕ թէյ 1 ր. 10 կ. մինչև 1 ր. 20 կ., շատ լաւ ՕՕՆՖԱ թէյ 1 ր. 40 կ., գեղեցիկ ՄՕՆԻՆԳ թէյ 1 ր. 60 կ. (այս թէյը ամեն տեղ ծախվում է 2 ր. և 2 ր. 50 կ.), ԿԱՍԱՈՒ թէյ 1 ր. 80 կ. և ամենալաւ ՖՈՒ-ՉԷ-ՖՈՒ թէյ 2 ր. ֆունտը քաշը առանց թղթի։ Նոյն տեղը սովորաբար լինում է 500 ԵՐԿԱԹԷ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 6 ր.—60 ր.։ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂ մագերի համար։ ԵՐԿԱԹԷ ԳՐԻՉՆԵՐ ամբողջ Կովկասի համար, շօկոլադ ՖՐԱՑ, շէֆիլդի ԴԱՆԱԿՆԵՐ, հրացաններ ԴԱՈՒ, ըէվոլվերներ ՎԷԲԼԻ, ԲԱՐՆԷԲԻի թամբեր, ՇՎԱՐՑԻ ալբոմներ։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԸ գտնվում է Թիֆլիսի մէջ, Դվորցովի փողոցի վրա Արծրունու գալէրէում № № 156, 157, 158, 159, 160։ Նոյն տեղը մեծ քանակութեամբ ԵՐԵԽԱՆԵՐԻ և տղամարդկանց մահճակալներ 25% էժան քան թէ ուրիշ տեղ և 10% էլ զիջումն։

2—100

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾ.

„ԵՂԲ. ՍԱԼԻ-ՕՂԼԻ“

Պատիւ ունի յայտնել ծխող յարգելի հասարակութեան, որ արդէն արտադրել է տաճկական և տեղական ընտիր ծխախոտներից սիգարէտկաներ և պախիտոսներ, որոնք վաճառվում են թէ Թիֆլիսի թէ այլ քաղաքների նշանաւոր ծխախոտ ծախս անողների մօտ։

Առաւելապէս առաջադրվում են սիգարէտկաները «Алитура—arrego» և պախիտոսները «Фіалка» կոչվածները։

Փոստով պահանջողների ճանապարհի ծախքը գործարանը իր վրա է ընդունում։

1—3 (2)

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ որ հիմնված է կենդանիների հովանաւորութեան ընկերութենից գտնվում է Սաղի վրա, Գվրիախ-շվիլիի տանը։ Հիւանդները ընդունվում են ամեն օր առաւօտեան 10—12 ժամը։

Խորհուրդի և դեղատոմսի վճարը 20 կ., իսկ դեղերը այն գնով, որով ձեռք է բերում հիւանդանոցը։ Աղքատները այդ բոլորը ձրի են ստանում։ Առողջ կենդանուն քննելու համար 1 ռուբլ է վերցվում։ Հիւանդ անասուններին ընդունում են հեռաւոր անասնաբոյժները. Շէյն-Ֆօգել երկուշաբթի, Թիտօվսկի երեքշաբթի, Ֆիլիմոնով չորեքշաբթի, Բալօսով հինգշաբթի, Ալտինսոն ուրբաթ, Մէշչէրսկի շաբաթ և Վավիլովսկի կիրակի։ Վերջին անասնաբոյժը ապրում է հիւանդանոցի մէջ։

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԿԱՅԷՆԻ ԿՏԱԿԸ

ՎԷՊԵՐ

ԶԱԽԵՐ-ՄԱԶՕԽԻ

Թարգմանեց

ՐԱՖՖԻ

ԳԻՆՆ Է 1 ՐՈՒԲԼ 20 ԿՕՊ.

Թիֆլիսում վաճառվում է

«Մշակի» խմբագրատանը—«Կենտրոնական դրավաճառանոցում»— «Կովկասեան դրավաճառանոցում» —Պ. Շահվերդեանի պավիլիօնում։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել թարգմանչին այս հասցէով.

Въ ТИФЛИСѢ. Редакція „Мшакъ“.

РАФФИ.

6—30

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

(առանձին փոփոխութեամբ)

ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ

„ԳՈՐԾԱԿԱՏԱՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ“

ԵՒ

„ՀՐԴԵՀ ՆԱԻԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ“

աշխատասիրութիւնը

ԱՐԺԷՔ 50 ԿՕՊԿ.

Կարելի է ձեռք բերել Թիֆլիսի մէջ կենտրոնական դրավաճառանոցում, Աղէքսանդր Մոսխեանի մօտ, և „Աստուածասիրեանց և ընկ“ առևտրական տների մէջ Կատօլիչեսկայի փողոցում, Զուբալովի տանը։

Հրատարակիչ—Աբել Ապրէսեանց

СЪ 1-ГО ЯНВАРЯ 1884 Г.

ВЪ Г. ТИФЛИСѢ ИЗДАЕТСЯ

НОВАЯ ЕЖЕДНЕВНАЯ

ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКАЯ ГАЗЕТА

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

(350 №№ въ годъ)

подъ редакціею А. В. СТЕПАНОВА (бывшій редакторъ «Юридическ. Обозрѣнія»).

Объемъ газеты печатный листъ средняго формата. Программа,—общая всѣмъ литературно-политическимъ изданіямъ.

ПОДПИСНАЯ ЦѢНА: съ доставк. и перес. на ГОДЪ 10 рубл., ПОЛЪ года 6 р., ТРИ мѣсяца 3 р. 50 к. ОДИНЪ мѣсяцъ 1 р. 25 к.

Городская и иногородная ПОДПИСКА принимается въ Тифлисѣ въ газетномъ агентствѣ ШАВЕРДОВА.

Въ Петербургѣ и Москвѣ въ книжн. магаз. «Новаго Времени».

Временное помѣщеніе редакціи: на Давыдовской улицѣ, домъ Кананова, квартира редактора.

4—5 (1).

„ԱՂԲԻՒՐ

Լոյս տեսաւ № 2 (փետրուար) և ուղարկվեց բոլոր բաժանորդներին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տատն ու կովը . . . . . Գ. Շահվերդեան
Ընկուզենի . . . . . Ա. Մեհրաբեան
Սառնամանիք (բանաստեղծութիւն) . . . . . Ղ. Աղայեանց
Գիշերապահ Մկօի երազը . . . . . Կ. Մ. Շահնազար.
Գեղջուկ (բանաստեղծութիւն) . . . . . Վաչագան
Պարոյր Հայկազն (Շարունակութիւն) . . . . . Ռաֆֆի
Կաչաղակների կռիւը աղուէսների հետ . . . . . Պրոֆ. Բոդդանով)
Թարգմ. . . . . Ց. Ստեփանեան

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Էլեքտրականութիւն I . . . . . Ն. Ա.
Կենդանիներ, բոյսեր և հանքեր (բնագիտական դրոյց ըստ Պ. Բէրի) II . . . . . Գ. Մ.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԳ

Անբախտ խալիֆայ . . . . . Մելիք

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Հանելուկներ (4 հատ.)
Ռեբուսներ (6 հատ)
Ցայտարարութիւններ։

Բաժանորդագրութիւնը շարունակվում է։

ՇՕԿՕԼԱՏ ԵՒ ԴՐԱԺԷ

Ս. ՍՈՒԻ ԵՒ ԸՆԿ.

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄՕՍԿՎԱՅԻ ՄԷՋ

Գտնվում է **ԹԻՖԼԻՍՈՒՄ** հետևեալ մագազիններում։ Գ. Մ. կոպաձէի, Ս. Անրեևի, Ա. Պ. Ակօպովի, Վ. Ֆ. Սիտովի, Ե. Ա. Եղիազարովի, Գ. Ա. Բաեաղչևի, Ս. Ա. Ծովիանովի, Ց. Ա. Բաբանսօսովի, Ց. Ի. Գուրգենովի, Ի. Ա. Եւանգուլովի և ուրիշ շատերի մագազիններում, նոյնպէս և **ԿՈՎԿԱՍԵԱՆ** երկրի միւս բոլոր քաղաքներում։

24—24 (1—15)



ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՆԱՑՔՆԵՐ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ ԳՆԱՑՔՆԵՐ ԲԱԹՈՒՄԻ ԵՒ ԲԱԳՈՒԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
	ժամ. րոպէ.	ժամ. րոպէ.		ժամ. րոպէ.	ժամ. րոպէ.
Բաթում. .	—	8— „ առ.	Բագու. . .	—	10—23 առ.
Սամտրեդի.	12— 2	12—18	Գանձակ . .	12—20	12—48 գիշ.
Ռիոն . . .	1— 9	1—22	Թիֆլիս . .	7—49	8—31 առ.
Սուրամ. .	6— 8	6—11 երեկ.	Գօրի . . .	10—56	11— „
Միխայլօվո.	6—23	6—33	Միխայլօվո.	12—26	12—46
Գօրի . . .	7—53	8— 2	Սուրամ. .	12—58	1— 1
Թիֆլիս . .	10—25	11—11	Ռիոն . . .	5—54	6— 9 երեկ.
Գանձակ . .	6—20	6—39 առ.	Սամտրեդի.	7— „	7—20
Բագու. . .	8— 8 երեկ.	—	Բաթում. .	11—21 երեկ.	—

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ԹԻՖԼԻՍԻ և ՍՈՒՐԱՄԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
	ժամ. րոպէ	ժամ. րոպէ		ժամ. րոպէ	ժամ. րոպէ
Սուրամ. .	—	1—38 գիշեր	Թիֆլիս . .	—	3—11
Միխայլօվո.	1—50	2— 5	Գօրի. . .	6—30 երեկ.	6—41
Գօրի. . . .	4— 6	4—30	Միխայլօվո.	8—41	8—56
Թիֆլիս. . .	8—առաւ.	—	Սուրամ. .	9— 8 երեկ.	—

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ՍԱՄՏՐԵԴԻԻ և ՓՕԹԻԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
	ժամ. րոպէ	ժամ. րոպէ		ժամ. րոպէ	ժամ. րոպէ
Փօթի. . .	—	8—45 առ.	Սամտրեդի.	—	7—30 երեկ.
Սամտրեդի.	11—39 առ.	—	Փօթի. . .	10—24 երեկ.	—

Дозволено цензурою, Тифлисъ, 31 Января 1884 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час., Лорисъ-Меликовская ул., д. каз.